

դրական ազդեցություն է գործում բանկերի կողմից ստացվող ոչ տոկոսային եկամուտների՝ $\overline{C_{n,տ}}/\overline{1}$ (մատուցված ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ, արտարժույթային գործառնություններից ստացված եկամուտներ, վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ, բանկի շենքի վարձակալությունից ստացված եկամուտներ և այլն) բարձր մակարդակը (8.2 տոկոս):

Աղյուսակ 3-ի հաշվարկները կատարված են 2-րդ աղյուսակի ելակետային տվյալների հիման վրա: Այսպես, 2007թ. համար որպես բազա համարվել է 9,8 տոկոսային սպրեդը, և որի նկատմամբ էլ հաշվարկվել են նրանում ներառված բաղադրիչները: Արդյունքում պարզվել է, որ սպրեդի 100%-ում $ROA\overline{C_{n,տ}}/\overline{1}$ հարաբերակցությունը կազմել է 53.2%, իսկ մնացորդային (Ե) մեծությունը՝ -9.1%, որը հաշվարկվում է՝ ելնելով աղյուսակ 3-ի տվյալներից և (4) բանաձևից:

Եթե ընդհանրացնելու լինենք, ապա պետք է նշել այն կարևոր իրողությունը, որ ՀՀ-ում ձևավորված բանկային տոկոսադրույքի սպրեդի մակարդակի վրա իր ազդեցությունն ունի նաև բանկային համակարգում տիրող մրցակցության աստիճանը, քանի որ խոշոր կամ, այլ կերպ, իշխող բանկերի առկայությունը և նրանց կողմից ավելի բարձր եկամուտների ստացումը ուղղակիորեն արտացոլվում է տոկոսադրույքների սպրեդում:

ԽԱՉԱՏՈՐ ԲԱՏԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զոքանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՐՏԱՋԱՆՄԱՆ ԽՁԱՆՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՈՐՊԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Տնտեսական աճի բարձր տեմպը ենթադրում է արտահանման ծավալների ավելացում և մուտք դեպի արտաքին շուկաներ: Արտահանման ծավալների ավելացումը նպաստում է ոչ միայն տնտեսական զարգացմանը և զբաղվածության աճին, այլև համաշխարհային ինտեգրմանը, երկրի միջազգային հեղինակության բարձրացմանն ու ամրապնդմանը, մշակութային և տեխնոլոգիական զարգացմանը, ներքին կարողությունների աճին:

20-րդ դարի վերջում աճի առավել բարձր տեմպեր նկատվեցին ասիական նոր արդյունաբերական երկրներում: ՀՆԱ-ի աճի միջին տարեկան տեմպը 1970-2006թթ. կազմում էր՝ Հյուսիսային Կորեայում - 7.37%, Սինգապուրում - 6.98%, Թայվանում - 6.51%, Հոնկոնգում - 5.63%, Թաիլանդում - 4.96%¹: Միևնույն ժամանակ դիտվում էր հստակ կախվածություն բաց տնտեսության մակարդակի, արտահանման նկատմամբ առևտրային քաղաքականության դիրքորոշման և արագ աճի ու զարգացման փուլերի միջև:

Շատ հետազոտողներ² հակված են ասիական երկրներում դիտվող արտահանման խթանման քաղաքականության հաջողությունը բնութագրել իրենց ազգային տնտեսությունների բնութագրիչներով՝

- զգույշ և մտածված մակրոտնտեսական քաղաքականությամբ (բյուջետային խելամիտ դեֆիցիտի, ինֆլյացիայի տեմպի պահպանում),
- քաղաքական կայունությամբ և բազային սեկտորներում հուսալի ենթակառուցվածքով,
- պրոֆեսիոնալ բյուրոկրատական ապարատի առկայությամբ,

¹ Radelet S. Manufactured Exports, Export platforms, and Economic Growth / Harvard Institute for international Development. Harvard University. 1999.

² The East Asian Miracle: Economic Growth and Public Policy / The World Bank. 1993; Frankel J., Romer D. Does Trade Cause Growth? // American Economic Review. 1999. Vol 89, No 3 (June).

- ազգային արժույթի փոխակերպման կուրսի կարգավորմամբ:
- Սակայն գործնականում աշխարհի ոչ մի երկրում չի հաջողվել ապահովել թվարկվածների լրիվ իրացում: Բացի այդ, նման խնդիրների լուծումը պահանջում է շատ տարիներ:

Արտահանող երկրների տնտեսությունների մեծամասնությունը չի համարվում լիովին բաց կամ լիբերալ: Այդ պատճառով մեծ է այն մեխանիզմների դերը, որոնք օգնում են հաղթահարել համապատասխան տնտեսության փակվածությունն ու անկատարությունը:

Ցանկացած ղեկավարություն, որը ցանկանում է օգնել սեփական ներդրողներին, բախվում է այնպիսի համակարգի ստեղծման հիմնախնդիրների, որի դեպքում արտահանվող ապրանքների ինքնարժեքից կբացառվեն ներքին հարկերը:

Հարկերը կարևոր դեր են խաղում ոչ միայն պետական բյուջեի եկամուտների ձևավորման գործում, այլև պետության տնտեսական քաղաքականության իրականացման և շուկայական տնտեսության պետական կարգավորման լծակներից մեկն են: Դա տեղի է ունենում պետության վարած հարկաբյուջետային քաղաքականության հիման վրա:

Հարկաբյուջետային քաղաքականությունը կարելի է իրականացնել 2 ձևով.

1. խթանիչ հարկաբյուջետային քաղաքականություն,
2. զսպող հարկաբյուջետային քաղաքականություն¹:

Խթանիչ հարկաբյուջետային քաղաքականության էությունն այն է, որ պետությունը ամբողջական առաջարկը մեծացնելու համար կիրառում է այնպիսի հարկային դրույքաչափեր, որոնք խրախուսում են արտադրողներին և բարձրացնում հասարակության գործարար ակտիվության մակարդակը:

Զսպող հարկաբյուջետային քաղաքականության ժամանակ տեղի է ունենում հարկային դրույքաչափերի բարձրացում:

Բացի վերը նշվածից, չափազանց կարևոր է նաև հարկային վարչարարությունը, որից ուղղակիորեն կախված է հարկային եկամուտների անհրաժեշտ մակարդակի ձևավորումը:

Տնտեսական բարձր աճ ապահովելու ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության հիմքն է գործարար միջավայրի որակական բարելավումը: Վերջին տարիներին հայաստանյան գործարար միջավայրը, ըստ միջազգայնորեն ընդունված հայտանիշերի, գնահատվում է հիմնականում բարենպաստ²: Այդուհանդերձ, գործարար միջավայրի որակը բնութագրող մի շարք կարևոր ցուցանիշներով Հայաստանը դեռևս չի համարվում բավականաչափ մրցունակ երկիր: Մասնավորապես, դա վերաբերում է վարկային ռեսուրսների մատչելիությանը, հարկերի վճարման ընթացակարգերի դյուրինությանը, մաքսային ընթացակարգերի պարզեցմանը, ներդրումների պաշտպանվածությանը և ստվերային տնտեսության ծավալներին³:

Ինչ վերաբերում է հարկային համակարգին, ապա հետագա տնտեսական աճի համար բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով կառավարությունը կարևորում է հարկային և մաքսային օրենսդրության կատարելագործումը: Միաժամանակ հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացումը պետք է ապահովի հարկային և մաքսային օրենսդրության պահանջների համահավասար և անվերապահ կիրառումը:

Առաջիկա 5 տարիների հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններն են՝

- հարկային օրենսդրության պարզեցումը և պահանջների հստակեցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ առկա անհստակությունները և երկիմաստությունները վերացնելու միջոցով.
- հարկման բազայի ընդլայնումը և հարկային բեռի հավասարաչափ բաշխումը, ինչը կիրա-

¹ Экономика, С. Фишер, Р. Дорнбуш, Р. Шмалензи, 2001, стр. 523-525.

² www.gov.am.

³ www.gov.am.

գործվի հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ մասի կրճատման միջոցով և նոր հարկային արտոնություններ չսահմանելով:

- հարկման մեխանիզմների կատարելագործումը՝ վերացնելով հարկումից խուսափելու օրենսդրական սողանքները, ինչպես նաև պարզեցնելով և հստակեցնելով իրավական նորմերը:
- գործունեության առանձին տեսակների համար սահմանված հարկման այլընտրանքային համակարգերի փոխարինումը հարկման ընդհանուր համակարգով:
- հարկային վարչարարության շարունակական բարելավումը¹:

Կառավարությունը նախատեսում է հասնել հարկային եկամուտների անհրաժեշտ մակարդակին՝ հատկապես հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցով: Այս ուղղությամբ կարևորվում են տնտեսական գործունեության ստվերային մասի կրճատմանն ուղղված միջոցառումները, որոնցով կամրապնդվեն գործունեության համահավասար պայմաններ: Այն կիրականացվի ստուգումների գործընթացի արդյունավետության բարձրացման, ապօրինի և ստվերային տնտեսական գործունեության բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ուժեղացման և պատասխանատվության խստացման մեխանիզմների հետևողական իրագործմամբ²:

Կառավարությունը ծրագրում է ներդնել հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգը, որով հնարավորինս կնվազեցվեն պաշտոնյաների և գործարարների ուղղակի շփումները:

2007թ. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի մոտ 30%-ը ապահովվել է հարկային վարչարարության կատարելագործման շնորհիվ:

ՀՀ պետական բյուջեի ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների փոփոխությունը 2000- 2007թթ. ընթացքում (մլրդ դրամ)³

	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, մլրդ դրամ	172.1	193.6	228.3	392.0	302.2	374.7	441.5	588.0
Հարկային եկամուտներ և տուրքեր	152.6	168.8	198.6	227.4	267.0	321.5	385.1	505.5
Ավելացված արժեքի հարկ	66.8	79.5	95.0	107.8	117.9	146.8	165.9	248.0
Շահութահարկ	20.4	16.3	17.4	17.6	32.0	46.6	65.3	75.5
Եկամտահարկ	13.4	11.2	12.5	16.8	20.4	26.6	35.5	46.8
Ակցիզային հարկ	26.1	31.0	35.3	39.1	40.7	38.6	39.9	41.5
Գույքահարկ	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.0	0.0	0.0
Այլ հարկային եկամուտներ	4.1	2.4	9.1	12.1	15.0	16.2	26.2	29.9
Մաքսատուրք	8.7	9.8	9.7	10.7	12.5	16.5	18.3	24.0
Հաստատագրված վճար	4.0	4.4	6.4	8.0	11.7	13.0	15.1	17.9
Պետական տուրք	8.9	13.9	13.2	15.2	16.9	17.3	18.9	21.9
Ոչ հարկային և կապիտալ եկամուտներ	11.1	15.5	12.7	14.1	21.5	41.6	41.2	58.0
Պաշտոնական տրանսֆերտներ	8.5	9.3	17.0	50.5	13.7	11.6	15.2	24.5

Չնայած կառավարության վերը նշված ծրագրերի իրականացմանը, դեռևս անհրաժեշտ աշխատանքներ պետք է իրականացվեն հարկ վճարողներին հարկային գերավճարների, հատ-

¹ www.gov.am.

² www.gov.am.

³ ՀՀ վիճակագրական Տեղեկագիր 2007:

կապես արտահանող ընկերություններին ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ:

Ինչպես երևում է աղյուսակից, պետական բյուջեի հարկային եկամուտների 49.06%-ը կազմում է ավելացված արժեքի հարկը: Ուշագրավ է այն, որ վերջին տարիներին պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ աճի ամենամեծ տեմպը ունեցել է ԱԱՀ-ն, մասնավորապես 2007թ. ընթացքում ԱԱՀ աճը կազմել է 49.48%:

Ավելացված արժեքի հարկը համարվում է կարևորագույն հարկ, որը կիրառվում է ավելի քան 120 երկրներում: ՀՀ-ում այն կիրառվում է 1997թ.-ից՝ սահմանված 20% դրույքաչափով՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, իսկ ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույքաչափը) ԱՀՀ-ի գումարը որոշվում է 16.67% հաշվարկային դրույքաչափով:

Բոլոր արտահանող երկրներում գործում է այնպիսի մեխանիզմ, որն ազգային արտահանողներին թույլ է տալիս արտադրությունում օգտագործել այնպիսի ապրանքներ, որոնք ներքին շուկայում գտնվել են առանց շրջանառության ներքին հարկերի վճարման, որն ապահովում է արտահանվող ապրանքների գնային մրցունակություն համաշխարհային շուկայում: Գոյություն ունեն ավելացված արժեքի հարկից ազատման երկու հիմնական մեխանիզմներ՝ ըստ ԱԱՀ-ի արտահանողների հարկային վարկավորման համակարգ և վճարված ԱԱՀ-ի փոխհատուցման համակարգ¹:

Առաջին մեխանիզմի օգտագործման դեպքում բոլոր գրանցված արտահանող ձեռնարկությունները ԱԱՀ-ի չափով ստանում են հարկային վարկ, որպեսզի հնարավոր լինի իրականացնել ներքին շուկայում կատարվող վճարումները: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտահանողները գումարում են ԱԱՀ ամբողջ ծավալը, որը վճարվել է ծախսային հումքի վրա, և այդ գումարի չափով նվազեցնում են տվյալ շրջանառու շրջանի հարկային վճարումների ընդհանուր գումարը և պետությանն են վճարում միայն ստացված տարբերությունը: Եթե այդ տարբերությունը ստացվում է բացասական (այսինքն՝ արտահանողի կողմից փաստացի վճարված ԱԱՀ գումարը գերազանցում է շրջանառու շրջանում կատարված այլ հարկային պահումների գումարը), արտահանողն իրավունք ունի պահանջելու փոխհատուցել այն դրամի տեսքով:

Սակայն հաճախ արտահանողներն իրականացնում են մի քանի տեսակ գործունեություն, որոնց մի մասը հարկվում է, մյուս մասը՝ ոչ: Այս դեպքում հարկային վարկեր տրամադրվում են միայն այն գործունեության մասով, որը հարկվում է:

Ուսումնասիրված համակարգն ամբողջությամբ բացառում է ԱԱՀ-ն արտահանվող ապրանքների ինքնարժեքից, խթանում է ներդրումների հոսքը և աջակցում արտահանողներին: Սակայն այն չի կարող գործել արդյունավետ, եթե ավել վճարված ԱԱՀ գումարի հետ՝ վերադարձման մեխանիզմը գործում է ոչ անհրաժեշտ մակարդակով: Շատ երկրների օրենսդրությամբ նախատեսված է, որ հարկային վարկերը պետք է օգտագործվեն ընթացիկ հաշվետու շրջանի ավարտից անմիջապես հետո, իսկ առաջացած մնացորդը պետք է տեղափոխել հաջորդ հաշվետու ժամանակաշրջան: Եթե յուրաքանչյուր ժամանակաշրջանում հարկային վարկի չափը գերազանցում է այլ հարկերի վճարման չափը, ապա վարկային պայմանների մեջ նախատեսվում է այդ տարբերության չափով փոխհատուցում դրամական տեսքով: Սակայն իրականում նման ավելցուկ ուղղակի չի առաջանում: Իսկ «մաքուր» արտահանման դեպքում դիտվում է հակառակ իրավիճակ. վճարվող հարկերի և հարկային վարկի միջև բացասական տարբերություն ի հայտ է գալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում և անընդհան կուտակվում է: Նման դեպքերում արտահանողները կարող են խուսափել զգալի հիմնախնդիրներից միայն դրամական փոխհատուցման արդյունավետ մեխանիզմի առկայության դեպքում:

¹ ՀՀ Պաշտոնական Տեղեկագիր 2007:

Արտահանողների կողմից վճարվող ԱԱՀ փոխհատուցման համակարգի շրջանակներում արտահանող ձեռնարկությունների կայուն ֆունկցիավորման պահպանման, ինչպես նաև բյուջետային ծախսերի մինիմալացման նպատակներով արտահանողները պարտավոր են ունենալ ԱԱՀ հատուկ ռեզիստր, որոնք հաստատում են ԱԱՀ փոխհատուցման իրենց իրավունքը:

Այս երկու համակարգերի շրջանակներում արտահանողների համար հիմնական խնդիրը կապված է այն բանի հետ, որ ԱԱՀ ներքին շուկայում ձեռք բերված ապրանքների դեպքում վճարվում է գնման պահին, իսկ այն ապրանքների համար, որոնք ներմուծվել են արտերկրից՝ սահմանից անցկացման կամ մաքսային ձևակերպման պահին: Թեև արտահանողներն իրավունք ունեն փոխհատուցման վճարված ԱԱՀ մասով, այնուամենայնիվ հարկի փաստացի վճարման և նրա փոխհատուցման միջև եղած կարճ ընդհատումը ստեղծում է բարդ ֆինանսական իրավիճակ: Շրջանառու միջոցների հոսքը նվազում է, որն էլ հանգեցնում է արտադրական ցիկլի դանդաղեցման:

Այս հիմնախնդրի լուծման համար մի շարք երկրներում օրենսդրությունը սահմանում է իրավունք, ըստ որի արտահանողները կարող են ԱԱՀ փոխհատուցում պահանջել ավելի հաճախ, քան այլ հարկերի դեպքում: Օրինակ՝ նրանք կարող են պահանջել ԱԱՀ փոխհատուցում ամեն ամիս, չնայած ստանդարտ ընթացակարգը նախատեսում է ավելի երկարատև ժամանակահատված:

ԱԱՀ փոխհատուցման տեսանկյունից մի շարք երկրներում առանձնացվում են 4 առավել հանրահայտ մեթոդներ:

Առաջին մեթոդը առանձին օրգանի ստեղծումն է, որը կախված չէ հարկային և մաքսային ծառայություններից և զբաղվում է ԱԱՀ փոխհատուցմամբ: Նման ադմինիստրատիվ ռեֆորմը միշտ տանում է կոռուպցիայի զգալի աճի:

Երկրորդ մեթոդը թույլ է տալիս էականորեն արագացնել ԱԱՀ փոխհատուցումը, թեև ամբողջությամբ չի կարող լուծել շրջանառու կապիտալի հիմնախնդիրը: Արտահանողները, որոնք պահանջում են ԱԱՀ փոխհատուցումը, պետք է գրավ դնեն այն գումարի չափով, որը հավասար է պահանջվող փոխհատուցման ամբողջ գումարին կամ նրա մի մասին: Գրավն արտահանողին հետ է վերադարձվում միայն այն բանից հետո, երբ ստուգվում են բոլոր պահանջները, և այն լինում է ամբողջովին հիմնավորված: Ժամանակի հետ բարեխիղճ հարկատու ձեռնարկությունների գրավի գումարը կարող է նվազեցվել: Այսպիսի մեխանիզմը թույլ է տալիս պահպանել ԱԱՀ փոխհատուցման գործընթացի վերահսկման բարձր մակարդակ: Նման համակարգ հաջողությամբ օգտագործել է Մեքսիկան:

Երրորդ մեթոդը մասնավոր առուղիտորական և հաշվապահական ձեռնարկությունների ներգրավումն է, որով ստուգում են արտահանողների ֆինանսական հաշվետվությունները: Այսպիսով, պատասխանատվության մեծ մասը ընկած է մասնավոր ձեռնարկությունների վրա: Այն բանից հետո, երբ նման համակարգը սկսեց կիրառվել Զենիայում, ԱԱՀ փոխհատուցման տարեկան ծավալը կրճատվեց 40 %-ով:

Չորրորդ մեթոդը վերաբերում է միայն արտասահմանից ներմուծվող ապրանքներից ԱԱՀ պահումների կարգին: Այն պետք է պահել ոչ թե մաքսային ձևակերպումների պահին, այլ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ իրացվում է արտահանող ձեռնարկության վերջնական արտադրանքը: Եթե իրացումն իրականացվում է արտաքին շուկայում, ԱԱՀ վճարման անհրաժեշտություն չի առաջանում: Այսպիսով, զգալիորեն նվազում են տրամադրվող հարկային վարկերի ծավալները, ինչպես նաև ԱԱՀ փոխհատուցման պահանջը: Նման մոտեցումը զգալիորեն օգտագործվել է Թայվանում և Սինգապուրում:

Ընդհանուր առմամբ կոռուպցիայի հիմնախնդիրը փոխհատուցման համակարգի շրջանակներում կրում է համապետական բնույթ: Շատ ժամանակ ներկայացվում են ԱԱՀ փոխհատուցման կեղծ փաստաթղթեր, նույնիսկ եթե ԱԱՀ չի վճարվել: Այստեղ առկա է հակասություն:

Արագացնել ԱԱՀ փոխհատուցման գործընթացը և մեծացնել կեղծ փաստաթղթերի հիման վրա նրա հետքերման ռիսկը, թե՞ առավել հանգամանալից վերլուծել յուրաքանչյուր դեպք, որի արդյունքում երկարացվում է համապատասխան պահանջների ուսումնասիրման ժամկետը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՏԻԿՑԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԵՐՆ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի բանկային համակարգ այդ երկրի տնտեսության զարգացման գործում ունի առաջնային նշանակություն: Մասնավորապես կարևոր դեր են խաղում առևտրային բանկերը, որոնք բանկային համակարգի կարևոր բաղադրիչն են: Սա պայմանավորված է նրանով, որ բանկը դրամաշրջանառության ոլորտի հիմնական կառուցվածքային միավորն է:

Գոյություն ունեն բանկի էությունը բնութագրող տարբեր սահմանումներ, որոնք ոչ թե հակասում, այլ փոխլրացնում են միմյանց, ինչը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմելու վերջինիս վերաբերյալ:

Բանկը ֆինանսավարկային ձեռնարկություն է, որը ավանդների տեսքով կենտրոնացնում է ժամանակավոր ազատ դրամական միջոցները, տրամադրում է դրանք ժամանակավոր օգտագործման վարկի տեսքով, հանդես է գալիս որպես միջնորդ իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխադարձ վճարահաշվարկային գործառնությունների ժամանակ, կարգավորում է դրամաշրջանառությունը երկրում, այդ թվում նաև նոր փողերի էմիսիան¹:

Բանկը անկախ առևտրային կազմակերպություն է, որը, ինչպես և ցանկացած ձեռնարկություն, ունի իր արտադրանքը: Բանկի արտադրանքը նախևառաջ վճարամիջոցների ձևավորումն է, ինչպես նաև վարկերի, երաշխիքների, տարատեսակ ծառայությունների մատուցումը:

Իսկ շուկայական էկոնոմիկայի պայմաններում բանկը ազգային տնտեսությունը լրացուցիչ դրամական ռեսուրսներով ապահովող գլխավոր գործառնական գործիքն է: Այն վերաբաշխում է դրամական ռեսուրսները դրանց ավելցուկային ոլորտներից դեպի դեֆիցիտային ոլորտներ, միջնորդ է վարկատուների և վարկառուների, վաճառողների և գնորդների միջև դրամական միջոցների շարժի ժամանակ: Բանկը գործում է փոխանակման ոլորտում. «գնում» և «վաճառում» է ռեսուրսները՝ նպաստելով ապրանքների փոխանակմանը:

Ժամանակակից բանկերը ոչ միայն իրականացնում են փողի առք և վաճառք, այլ նաև շուկայի վերլուծաբաններ են: Իրենց զբաղեցրած դիրքով նրանք ավելի մոտ են գործարարությանը, դրա պահանջմունքներին և փոփոխվող կառուցվածքին: Մրանով իսկ տնտեսության կարգավորման գործում բանկը դառնում է գլխավոր, հիմնարար օղակներից մեկը:

Բանկերը, ընդլայնելով կապիտալի կուտակման բազան, կենտրոնացնում են ինչպես խոշոր, այնպես էլ մանր խնայողությունները և ներդրումային ու վարկային համակարգերի միջոցով ներդնում ստացված միջոցները տնտեսության զարգացման գործում:

Առանձնահատուկ ֆինանսական միջնորդ լինելու պարագայում բանկն իր հաճախորդների համար կարող է հանդես գալ նաև որպես գործակալ՝ կատարել վճարումներ երրորդ անձանց համար, ընդունել և վճարել չեկեր, գներ, վաճառել և փոխանակել արտարժույթ և ար-

¹ Экономика, К.Р.Макконнелл, С.Л.Брю, 14-е издание, 2003, стр.294-295.